

<https://doi.org/10.46991/hc.2025.22.1.218>

“Khab u Khaz” in Armenian Industrial Culture

Hasmik Harutyunyan

<https://orcid.org/0009-0003-3736-8511>

YSU Faculty of History, Department of Archaeology and Ethnography, PhD, Associate Professor

h.harutyunyan@ysu.am

Keywords: dairying culture, cooperation,
milk-lending, stick, honest relations,
neighboring women, idea.

A classic manifestation of economic cooperation in the Armenian dairying culture is the phenomenon of milk-lending, when a group of neighboring women of the community in a village or summer mountain pasture agree to process the milk in turn, giving their milk for the day to one of them. In the past, this phenomenon was widespread in various Armenian ethnographic regions; now it exists mainly in Shirak, Javakhk, and is known as khabukhaz. According to the accepted order, each of the participants of the group has a stick, on which the amount of milk is marked with notches.

Milk-lending requires honest relations; otherwise it could not be held. Women even believed that the deceiver could suffer badly – cows will dry up, the milk will often curdle, spoil, and so on. This folk perception is vividly reflected in proverbs as well as in the medieval fable. Field materials prove that the cooperation of family members of the group is passed down from generation to generation.

The cooperation can be considered a wonderful idea of an Armenian housewife to take care of the needs of living, an original manifestation of the skill of organizing the industrial culture. The groups were formed during gatherings and discussions of neighboring women. This cultural phenomenon is additional evidence of the fact that the Armenian woman is also capable of social activities, she had an important role not only in the family, but also in the industrial culture.

The main purpose of the cooperation was to prepare the annual supply of vital means of peasant's livelihood, especially butter and cheese, which, without the formation of groups, was almost impossible to realize.

Խաբ ու խազը հայոց արտադրական մշակույթում

Հասմիկ Հարությունյան

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 218-230



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 11.06.2025

Revised: 12.08.2025

Accepted: 14.09.2025

© The Author(s) 2025

ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, Հնագիտության և ազգագրության ամբիոն, պ.գ.թ., դոցենտ

Հիմնաբառեր՝ կաթնատնտեսության մշակույթ,
համագործակցություն, կաթը փոխ տալ,
ճիպոտ, ազնիվ հարաբերություններ, հարևան կանայք, մտահղացում:

Հայոց կաթնատնտեսության մշակույթում տնտեսական համագործակցության դասական դրսևորում է կաթը փոխ տալու երևույթը, երբ գյուղում կամ ամառանոց-սարում համայնքի մի խումբ հարևան կանայք պայմանավորվում են կաթը մշակել (կաթնամթերք պատրաստել)՝ հերթով՝ բոլորի օրվա կաթը մի քանի օր տալով նրանցից մեկին: Երևույթն անցյալում տարածված է եղել հայոց ազգագրական տարբեր շրջաններում, այժմ կենցաղավարում է հիմնականում Շիրակում, Զավախքում և հայտնի է խաբուխազ անունով: Ընդունված կարգի համաձայն՝ խաբի մասնակիցներից յուրաքանչյուրն ունի ճիպոտ, որի վրա արվող խազերով նշվում է փոխարինաբար տրվող-վերցվող կաթի չափը:

Կաթփոխը ենթադրում է ազնիվ հարաբերություններ, այլ պարագայում այն չէր կարող կայանալ: Կանայք անգամ հավատացել են, որ խաբողը կարող է չարաչար տուժել. կովերը կցամաքեն, կաթը հաճախ կկտրվի՝ կփչանա, նն: Ժողովրդական այս պատկերացումը հստակորեն արտացոլված է առած-ասացվածքներում, միջնադարյան առակում: Դաշտային նյութերը վկայում են, որ խմբի անդամ ընտանիքների համագործակցությունը փոխանցվում է սերնդեսերունդ:

Կաթնատնտեսության մշակույթում համագործակցության այս ձևը կարելի է համարել ապրուստի կարիքները հոգալու՝ հայ տնտեսուհու հրաշալի մտահղացում, արտադրական մշակույթը կազմակերպելու հմտության ինքնատիպ դրսևորում: Համագործակցող խմբերը ձևավորվել են հարևան կանանց հավաքների, քննարկումների ընթացքում: Մշակութային այս երևույթը լրացուցիչ վկայություն է այն իրողության, որ հայ կինը ունակ է նաև հասարակական գործունեության, կարևոր դեր է ունեցել ոչ միայն ընտանեկան, այլև արտադրական մշակույթում:

Համագործակցության հիմնական նպատակը ոչ ունևոր գյուղացու ապրուստի կենսական միջոցների, հատկապես յուղ ու պանրի տարեկան պաշարի պատրաստումն էր, որն, առանց խմբերի ձևավորման, գրեթե անհնար էր իրականացնել:

«Хаб у хаз» в армянской производственной культуре

Асмик Арутюнян

ЕГУ, кафедра археологии и этнографии, кандидат наук, доцент

Ключевые слова: культура молочного хозяйства,
сотрудничество, одалживание молока, палочка,
честные отношения, соседки, идея.

Классическим проявлением экономического сотрудничества в культуре молочного хозяйства армян является обычай одолжения молока, когда группа соседских женщин в деревне или на

летовке договаривается обрабатывать молоко по очереди, каждый день отдавая молоко одной из них. В прошлом этот обычай был широко распространен в различных армянских этнографических регионах, сейчас бытует в основном в Шираке, Джавахке и известен как хаб у хаз. Согласно принятому порядку, у каждого из участников группы есть палочка, на которой насечками отмечают количество молока.

Сотрудничество подразумевает честные отношения, иначе оно не могло бы состояться. Женщины даже верили, что обманщица может сильно пострадать: коровы засохнут, молоко часто будет сворачиваться, портиться и т.д. Это народное представление ярко отражено в пословицах, в средневековой басне. Полевые материалы показывают, что сотрудничество семей, входящих в группу, передается из поколения в поколение.

Эта форма сотрудничества в культуре молочного хозяйства можно считать прекрасной идеей армянских домохозяек позаботиться о средствах к существованию, оригинальным проявлением навыков организации культуры производства. Группы формировались в ходе собраний и обсуждений соседских женщин. Этот культурный обычай является дополнительным свидетельством того, что армянская женщина способна и к общественной деятельности, она играла важную роль не только в семейной, но и в производственной культуре.

Основной целью сотрудничества была подготовка годового запаса жизненно необходимых средств к существованию крестьянина, особенно масла и сыра, что без образования групп осуществить было почти невозможно.

* * *

Ներածություն: Խաբ ու խազը՝ որպես երևույթ: Կարճ փոխարինաբար տալով՝ կարճ փոխ տալու հնուց եկած սովորույթը վերննշյալ, ավելի հաճախ կրճատ՝ խաբ [խապ, խափ] անունով անցյալում տարածված է եղել հատկապես Բարձր Հայքում, հարակից տարածքներում [ըստ գրավոր աղբյուրների՝ տարածման արեալն ավելի լայն է եղել. տե՛ս, օրինակ՝ Անդրեասեան, 1977, 94, 154; Թորոսեան, 1969, 1141; Գասպար Յ., Նոր-դար, 06.05.1892, 1-2], այժմ կենցաղավարում է հիմնականում Շիրակի և Ջավախքի որոշ գյուղերում [Բոյան, 1974, 52; ԴԱՆ, 2023-2025]¹: Տարբեր կենդանիների [այծ, ոչխար, կով, գոմեշ] կաթի խաբն առանձին է եղել: Մեր օրերում, օրինակ՝ Շիրակի Գառնառիճ գյուղում ոչխարի կաթի խաբ են անում, քանի որ կովի կաթը պետությունը իրացնում է [ԴԱՆ, Գառնառիճ, 2023, 45]:

Խաբ բառը ստուգաբանվում է թուրքերեն kap/qap՝ աման բառով: Խաբ տալ՝ Հ. Աճառյանը, համեմատելով գրաբարյան յանօթ տալ [որ նշանակում էր փոխ տալ] արտահայտության հետ, ենթադրում է, որ ժողովրդական խոսքում գործածվել է անօթ-աման բառի թուրքերեն տարբերակը [Աճառեան, 1913, 444]:

¹Մինչև վերջերս համագործակցության այս ձևը նույն անունով կիրառվում էր Արագածոտնի մարզի հատկապես այն գյուղերում, որտեղ տարբեր պատճառներով բնակություն հաստատած ջավախահայերը երևույթը ներմուծել էին նոր բնակավայրերի մշակույթ (ԴԱՆ, Արագածոտն, Արտենի, 2019): Անշուշտ, խոսքը չի վերաբերում ապակյա բանկաներով, դուլներով կամ այլ տարաներով չափելով կարճ փոխ տալուն, որը գոյություն ունի նաև մեր օրերում հայոց տարբեր տարածաշրջաններում:

Ո՞րն է *խաբի* իմաստը: Քիչ *կթան* [կթու անասուն] ունեցողի համար դժվար է երկար ժամանակ *[հ/րեժանը* [սերը] հավաքել, պահել. թթվում է, կորցնում է որակը: Ցանկալի է՝ գոնե ոչ ուշ, քան շաբաթը մեկ *խնցի հարել* [Գասպար Յ, Նոր-դար, 06.05.1892, 1-2; ՀԱԻ Արխ., Պատրիկ Ա. Ֆ., ց. 1, գ. 1, թ. 29; Թորոսեան, 1969, 1141; ՀԱԻ Արխ., Գևորգյան Գ. Ֆ., գ. 1, թ. 86]: Կարծում ենք՝ այս մասին լրացուցիչ վկայություն է նաև բանասացների կողմից *կաթը փոխ տալ* երևույթի՝ կենցաղավարումից աստիճանաբար դուրս մղվելը սառնարանների ի հայտ գալով պայմանավորելը. առանց *փոխ տալու* կարողանում են *կաթը հավաքել*՝ պահելով սառնարանում, որտեղ մի քանի օր չի թթվում և չի կորցնում որակը [ԴԱՆ, Վարդենիս, Գալստյան Թամարա, 20.09.2023]:

Խաբի հիմնական իմաստն այն է, որ քիչ քանակությամբ կաթ ունեցող ընտանիքները կարողանան ձմռան համար յուղ ու պանիր մթերել, կաթի փոքր քանակությունը մշակելու վրա ժամանակ, ծախս, աշխատող ձեռքեր իզուր չկիրառեն, չմշակելու դեպքում էլ, ճիշտ է, կօգտագործվի՝ տանեցիները կխմեն և այլն, բայց ձմեռվա պաշար, վաճառքի ավելցուկ, որոնք այնքան կարևոր են գյուղացու համար, չի պատրաստվի, ուստի, ինչպես ժողովուրդն է ասում, *կաթն անհետ կկորչի* [Վանցեան, 1896, 103, ԴԱՆ, Վրաստան, Գանձա, 2023]:

Մեր օրերում *խաբ են անում* հիմնականում 2-3, առավելագույնը՝ հինգ հարևանուհիներով [ԴԱՆ, Գանձա, 2023, 45; Շիրակ, Սառնաղբյուր, 2024; Անուշավան, 2024]: Աղբյուրներում նշվում են տարբեր թվեր՝ 4-5, 6-7, 8-10 ընտանիք[տե՛ս հոդվածում նշված գականությունը]¹: Եթե հավատանք Գ. Վանցյանի տվյալներին, փոքր գյուղը կազմել է մեկ *խաբ*, մեծ գյուղերում կազմվել են մի քանի խմբեր՝ յուրաքանչյուրն ընդգրկելով 20-30 ընտանիք[Վանցեան, 1896, 100]: Գործնականում այսքան ընտանիքներով խումբ կազմելը բավականին բարդ է, գուցե անհնարին, որի մասին վկայում են դաշտային նյութերը[Արգարյան Շահանե[ծնված Ջավախքի Գանձա գյուղում], Արմավիր, Վաղարշապատ, 14.11.2023; Ղարիբյան-Գրիգորյան Վարդիթեր[ծնված Ջավախքի Գանձա գյուղում], Շիրակ, Գառնառիճ, 22.11.2023]: Վ. Բդոյանի տեղեկությամբ՝ *խաբ արել են* ազգականներով, բացառությամբ, եթե ազգականը հեռու է ապրել կամ անագնիվ է եղել երբևէ[Բդոյան, 2014, 109]:

Կաթը չափելու ձևը: Ընդունված կարգի համաձայն՝ նախապես պայմանավորված կանայք՝ *խաբվորները* [*խաբորները, խավորձիքը, խաբջիները, խաբկիցները*], սովորաբար մայիսի առաջին օրերից ամեն առավոտ և երեկո *խաբ են բերում*, այսինքն կաթը բերում, փոխարինաբար տալիս են մեկին որոշակի ամանով և չափով: Մեր օրերում կաթը չափում են ապակյա բանկայով, լիտրերի գծանշումներ ունեցող ժամանակակից դուլներով կամ դարերի խորքից եկած յուրօրինակ՝ ազգագրության տեսանկյունից առավել ուշագրավ ձևով. մոտավորապես կես մետրանոց բարակ փայտիկ-ճիպոտով, որի վրա նշում են տված-վերցրած կաթի քանակը [Նկ. 1]: Ճիպոտն ամեն օր նույն ծայրով[քանի որ այն ունի «*ոտ ու գլուխ*»] իջեցնում են հարթ տեղ դրված կաթով լի ամանի հատակը, մի երկու անգամ ստուգելուց հետո դանակով փոքրիկ փոս փորում՝ *խազ անում, խազ քաշում* [այստեղից էլ՝ *խաբ ու խազ* անումը] ճիպոտի այն տեղում, որը ցույց է տալիս

¹Նկատենք, որ մեր օրերում կանայք կաթի փոխանակության դիմում են նաև Նոր տարվա նախօրեին՝ ամանոթյա խմորեղեններ թխելու համար անհրաժեշտ կաթնաքմթերքի պաշար ապահովելու նպատակով, նախապաշարումներից ելնելով՝ ջանում են մինչև Նոր տարի *պարտքից մաքրված լինել* (ԴԱՆ, Գանձա, 2023, 45):

փոխարինաբար տված՝ այդ օրվա կաթի քանակը[Տեր-Գրիգորեան Գր., Գիւղատնտես, 21.11.1910, 646; Համբարձումեան, 1927, 138; Վանցեան, 1896, 98; ԴԱՆ]: Ուշագրավ է, որ որոշ տարածաշրջաններում *խազ* կոչվել է նաև հենց ճիպոտը[ՀԱԻ Արխ., Սահակյան Ն. ֆ., գ. 1, թ. 125]: Տարբեր տարածաշրջաններում ճիպոտը հայտնի է տարբեր անուններով ևս՝ *ծոնթ* [Ջավախք], *քենջ* [Շիրակ], *քարտիկ* [Կարնո նահանգ], գործընթացը, համապատասխանաբար, *ծոնթել*, *քենջել*, *քոթ անել*, *քարտել/քոթել*՝ տաշել [Կարախանյան, 2003, 280; Բդոյան, 2014, 110; Հակոբյան, 1974, 138; ՀԱԻ Արխ., Սանասարյան Ս. ֆ., գ. 1, գ. 2, թ. 157; ԴԱՆ, Անուշավան, 2023, 50: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում *քենջ* բառի առաջին իմաստը՝ կաթը չափելու ձող. տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, 729]:

Գ. Վանցյանի պատկերավոր խոսքով՝ ճիպոտը կարելի է համեմատել պարտատիրոջ մուրհակի հետ: Նույն ճիպոտով և ամանով *խաբվորը* հետագայում ստանում է իր պարտքը: Նկատենք, որ կարող է ստանալ նաև ավելին, քան պարտքը: Ավելցուկը վերադարձվում է հետո՝ նույնքան հնարամիտ և յուրօրինակ չափումների միջոցով [ԴԱՆ, Ահարոնյան, 1982, 82; ՀԱԻ Արխ., Գևորգյան Գ. ֆ., գ. 1, թ. 86; մանրամասն տե՛ս Բդոյան, 2014, 108-110]:

Սովորաբար ճիպոտը մնում է կաթն ընդունողի՝ *խաբ նստողի*, *խաբի տիրոջ* մոտ: Յուրաքանչյուր *խաբվոր* ճանաչում է իր ճիպոտը և մտքում պահում, թե քանի *խազ* [*քենջ*] կաթ է տվել *խաբատիրոջը* և որքան ունի հետ ստանալու [Աղավնի, 1973, 125]: Ըստ դաշտային նյութերի՝ *խաբվորներն* իրենց անվան առաջին տառը փորագրում են ճիպոտի վերին ծայրին. եթե տառերը համընկնում են, անկասկած, կանայք այլ հնարամիտ միջոց են գտնում [ԴԱՆ, Գառնառիճ, 2023, 46]: Ըստ ազգագրական գրականության մեջ եղած նյութերի՝ խարդախությունից խուսափելու նպատակով [որպեսզի խազերի թիվը չավելացնի հանձնողը, չպակասեցնի ստացողը], պատահել է, որ *խաբվորներից* յուրաքանչյուրն ունենա երկու ճիպոտ, որոնցից մեկը մնում էր կաթը տվողի, մյուսը՝ վերցնողի մոտ [ՀԱԻ Արխ., Գևորգյան Գ. ֆ., գ. 1, թ. 86]: Ավ. Ահարոնյանի տեղեկությամբ՝ չափացույց փայտի, նշափայտիկի վրա թել էին կապում[Ահարոնյան, 1982, 82]: Կարծում ենք՝ եթե նույնիսկ այդպես է, թելը կկապեին խազած տեղում, որովհետև, ինչպես վկայում են բանասացները, ողորկ ճյուղի վրայից թելերը սահում են: Նկատենք, որ ժողովրդական լեզվում գործածված *խազուկոճ* բառն ունի *փայտե փոքրիկ ձողի վրա նշաններ անել, հաշիվ պահել* իմաստը[Անդրեասեան, 1977, 154]:

Խաբի տերը փոխվելուց, *խաբը այլ տուն տեղափոխվելուց* [*խաբը գնում է այդ տանից*] առաջ կատարվում է, այսպես կոչված, ճիպոտները հավաքելու արարողությունը, այսինքն հաշվում են, թե ով ինչքան կաթ է տվել նախորդ *խաբի տիրոջը*: Ըստ դաշտային նյութերի՝ ճիպոտը մասրենու, խնձորենու ճյուղից է [ըստ բանասացների՝ կարևորը՝ ճկուն լինի], աղբյուրներում հանդիպել ենք՝ որթատունկի փայտ[Փոլատեան, 1969, 124]: Նույն ամանի[մեր օրերում հիմնականում դույլի] մեջ լցնում են յուրաքանչյուր *խազի* չափով ջուր [կամ շիճուկ], ջուրը հավաքում *բազի* [մեծ ամանի] մեջ, վերջում, ըստ ջրի քանակի, հաշվում, թե որքան կաթ են տվել:

Համագործակցության էությունը և կանոնները: Ըստ դաշտային նյութերի՝ հաջորդ *խաբ նստողը* նա է, ով ամենաշատ կաթն է տվել նախորդ *խաբ նստողին*: Ըստ գրավոր աղբյուրների՝ հերթականությունը պայմանավորվել են նախապես[Վանցեան, 1896, 101]: Որոշ գյուղերում *խաբին*

նախորդում է, այսպես կոչված, *թանախաբը*¹։ մեր կարծիքով՝ սա կարելի է համարել աղապատացիոն մի փուլ, որի ընթացքում կաթն իրար *փոխ են տալիս* մոտավորապես 2-3 օր, որպեսզի ոչ միայն վերջնականապես հստակեցնեն, թե ո՞ւմ կաթն է ամենաշատը [ըստ այդմ, ո՞վ է առաջինը *նստելու խաբի գլուխ*], այլ նաև նախապատրաստվեն «հարմարվելու», այսպես կոչված, *մեծ խաբին* [երկարաժամկետ *խաբին*- Հ.Հ.], հավաքեն ընտանիքի մինիմում կարիքները բավարարող կաթնամթերքի պաշար, նախքան *մեծ խաբի* ընթացքում *խաբն իրենց տուն գալը*։ Նկատենք, որ *մեծ խաբի* օրերին, քանի դեռ *խաբն ուրիշի տանն էր*, դժվար էր թույլ տալ որևէ «շոայություն», ինչի վկայությունը 42-ամյա բանասացի հիշողությունն է մանկության տարիներից (ԴԱՆ, Արագածոտն, Արտենի, 2023, 32)։ երբ Շողիկ տատիկին խնդրել են գաթա թխել, հետևյալ պատասխանն են ստացել. «Բալես, *խաբը իմը չէ, խաբը կգա մեր տուն*, սերը կհավքենք, կարագ կենենք, գաթա կթխենք» [մեծ ընտանիքում առնվազն 10-15 գաթա էին թխելու]²։

Կաթն առաջինը պարտք վերցնողին, ապա հերթով վերադարձնողին անվանել են *մայր* [կաթնամայր] կամ *խաբ-գլուխ*, որի ընտրությունն ամենաառաջին, կարևոր և բարդ գործն է եղել։ Ինչպես նշվեց վերը, սովորույթի համաձայն, նաև տնտեսական պատճառներով *մայր* [խաբ-գլուխ] դարձել է ամենից շատ կաթ ունեցողը։ Պատահել է, որ նույն քանակի կաթ ունեցողները մի քանիսն են եղել, և նրանցից յուրաքանչյուրը խուսափել է *մայր* դառնալուց։ Այդ դեպքում համայնքը նրանցից մեկին համոզել է, ընտրվողը համաձայնել է՝ ինչ-ինչ առավելություններ նկատի ունենալով [առավելությունների մասին տե՛ս ստորև]։ Հազվադեպ է պատահել, որ նույն ընտանիքը միաժամանակ տարբեր անասունների կաթի *խաբ-գլուխ* կանգնի։

Խաբի կանոնները չեն պարտադրում *խաբվորին*՝ ամեն օր *խաբ բերել* [կաթ տալ] կամ ամբողջը տալ. յուրաքանչյուրը կարող էր տանել այնքան և այն ժամանակ, որքան և երբ կամեցել է։ *Խաբը*, համայնքը վնաս չի կրել դրանից, այլ նա, ով քիչ է մասնակցել։ *Խաբի* ընթացքում, անշուշտ, համայնքը նյութական օգուտ է ունեցել։ Ըստ Գ. Վանցյանի՝ ամենապարզ հաշվարկներով կաթնատնտեսության հետ կապված ընդհանուր ծախսերը [սկսած վառելիքից, ավարտած ամեն օր օգտագործելու պատճառով մաշված, ծակված ամանները հաճախ կլայեկելու [նորոգելու] ծախսերը] մեկ ընտանիքի հաշվով կրճատվել են այնքան անգամ, որքան ընտանիքներից բաղկացած է եղել տվյալ *խաբը* [Վանցյան, 1896, 104-105]։ Իհարկե, գյուղացին չի էլ մտածել *խաբի* խնայողական գործառույթի մասին, գյուղացու նպատակը ձմռան պաշար պատրաստելն է եղել։ Բարձր Հայքում կլիմայական խիստ պայմաններ էին, 6-7 ամիս տարածքը ձյունապատ էր, սննդի մեջ յուղ ու պանրի առկայությունը կարևոր էր։ Այս առումով *խաբը* փրկություն էր, քանզի նույնիսկ մեկ կով և մի քանի ոչխար ունեցողը, մեկ մատակ [կթու գոմեշ], նույնիսկ մեկ այծ ունեցողը յուրաքանչյուր օրվա քիչ կաթը հարևանին տալով, հետագայում այնքան է ստացել, որ մի քանի օրում կարողացել է բավականաչափ *մասխուլ* [յուղի ու պանրի պաշար, կաթ ու կաթնամթերք]

¹Բանասացի խոսքով՝ *ստից խաբ, սուտ խաբ*։ Հայտնի է, որ ժողովրդական խոսքում «թան» բառը էժան, ոչ թանկ, ոչ էական, ոչ արժեքավորի հոմանիշ է, օրինակ՝ թանագող. մանր բաներ գողացող (տե՛ս Աղայան, 1976, 416)։ Ըստ այդմ, հենվելով նաև դաշտային աշխատանքների ընթացքում գրանցած նյութի վրա՝ ենթադրում ենք՝ «թանախաբ» բառը ժողովուրդը գործածում է *ոչ հիմնական խաբ* իմաստով։ Նկատենք, որ ժողովուրդն սկզբնապես «թանագող» անվանել է կաշաղակներին, քանի որ նրանց երբեմն հաջողվել է «գողանալ» արևի տակ փռած չորաթանի գնդիկները (ԴԱՆ, 2023, 50)։

²Նկատենք, որ 1960-ականներին Արտենի գյուղում *խաբուխագ* երևույթի առաջին ներմուծողներից մեկը եղել է Շողիկ Քենակսզյանը՝ ծնված Ջավախքի Գումբուրդո գյուղում, 1924 թվականին։

Խաբ ու խազը հայոց արտադրական մշակույթում

ունենալ, պատրաստել *վազնատի* [պանրի շիճուկի մեջ մնացած պանրային նյութ, որից լոռ կամ հասարակ պանիր են պատրաստում, լոռի համ չունի և լոռի պես սննդարար չէ. տե՛ս Մալխասեանց, 1945, 286] ձևովա պաշարը[Վանցեան, 1896, 103 ; Փոլատեան, 1969, 88; Հակոբյան, 1974, 138; Սանասարյան, 1965, 157], ձմռան *թարխանան* [պարսկերեն՝ մի տեսակ չորթան, որով ապուր են պատրաստում. տե՛ս Մալխասեանց, 1944, 87] ու չորթանը [Փոլատեան, 1969, 124]:

Սովորաբար վերջին *խաբ նստողն* ամենաքիչ կաթ ունեցողն է եղել: Նկատենք, որ հում սերն ավելի թանձր է լինում մայիսին, հունիսի սկզբներին, և կաթից ավելի շատ յուղ ու պանիր է ստացվում, քան տարվա ավելի շոգ ժամանակահատվածում, երբ հերթը եկել է քիչ կաթ ունեցողներին, աղքատներին: Բացի այդ, շոգ ամիսներին կաթը թթվում է, այդ կաթից պատրաստված պանիրն անորակ է լինում, խնոցի հարելու ժամանակ էլ շոգից հում սերը *հալ է ընկնում* [հալչում է], և քիչ կարագ է ստացվում: Այսպիսով՝ 10-12 կովի կաթը 20-25 հոգանոց գերդաստանի համար առատ սնունդ է եղել, տարվա վերջին վաճառելու համար բավական յուղ ու պանիր էլ է ավելացել, իսկ երեք կովի կաթից վեց հոգանոց ընտանիքի՝ խնայողաբար ուտելու յուղ ու պանիր էլ չի ստացվել: Ժողովրդի խոսքով՝ «*Շատը շահվել է, քիչը թափվել է*» [Բայպուրտցեան Ս, Գիւղատնտես, 22.05.1896, 3]: Իհարկե, գրավոր աղբյուրները վկայում են, որ *խաբի* ներքին կանոնները կարգավորել են այնպես, որ յուրաքանչյուր *խաբվոր* երկու ժամանակահատվածներում էլ *խաբի տեր* լիներ: Բացի այդ, տարբեր արոտատեղիներ տարբեր յուղայնություն ունեն. դա էլ են կարգավորել, քանի որ ոմանք երբեմն կաշառել են անասունն արածեցնողներին[Բոյոյան, 2014, 109]: Համայնքը կարգավորել է նաև, որ շատ *կթան* ունեցողը քիչ *կթան* ունեցողին չգցի այնպիսի պարտքի տակ, որ նրա ուժերից վեր լինի վերադարձնելը, քանզի *խաբի* իմաստը ընդհանուրի՝ հավասար իրավունքներ ունեցող բոլոր անդամների օգուտն է:

Երբ ավարտվել է *մեծ խաբը*, սկսվել է *փոքր[պզտի]*, ԴԱՆ, Լուլուկյան Վանիկ[ծնված Ջավախքի Գանձա գյուղում], Արմավիր, Վաղարշապատ, 14.11.2023] *խաբը*՝ նույն սկզբունքով, միայն ժամանակամիջոցն է կարճ եղել, կաթն էլ քիչ: Էական տարբերությունը մեծից այն է եղել, որ *խաբվորները* պայմանավորվել են ստանալ միայն իրենց պարտքը, նոր պարտքի տակ չեն մտել, որովհետև այլևս վճարելու ժամանակ չէր լինի, քանի որ աշունը մոտեցել է[Վանցեան, 1896, 102]:

Դաշտային և գրավոր նյութերը վկայում են, որ ունևոր ընտանիքները, շատ *կթան* ունեցողները *խաբի* անդամ դառնալու կարիք չեն ունեցել: Մեր օրերում էլ *խաբ են մտնում* հիմնականում մեկ կով ունեցող հարևանուհիները[ԴԱՆ, 2023-2025]: *Խաբ արել են* նրանք, ովքեր քիչ *կթան* են ունեցել. նման ընտանիքների համար *խաբը* պահանջ, հարկադրանք է եղել, որը, ժամանակակցի պատկերավոր խոսքով, աղոթքի պես կրկնվել է տարվա նույն եղանակին, նույն օրերին[Համբարձումեան, 1927, 137-138; ՀԱԻ Արխ., Սանասարյան Ս. ֆ., ց. 1, գ. 2, թ. 157; Հակոբյան, 1974, 138; ԴԱՆ, Լուլուկյան Վանիկ[ծնված Ջավախքի Գանձա գյուղում], Արմավիր, Վաղարշապատ, 14.11.2023]: Գ. Վանցյանի նկարագրությունից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ ունևորներին համայնքն է պարտադրել *խաբ մտնել*՝ հանուն չքավորների շահերի: Այս երևույթի «գյուտը», հանդգնած ենք, քիչ *կթան* ունեցող, աղքատ ընտանիքների տանտիկիներինն է:

Կաթվորսի հետ կապված ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքները, երևույթն արտացոլող բանահյուսական որոշ նմուշներ: *Կաթվորսը* ենթադրում է մաքուր և ազնիվ հարաբերություններ [օրինակ՝ ջուր չխառնել, կովի կաթին այծի կաթ չխառնել և այլն], այլ

պարագայում այն չէր կարող կայանալ: Ժողովուրդը, հավատալով, հորդորում է. «Կաթին ջուր մի՛ խառնիր, որ կաթը ջուր չդառնա»:

Խագերը, առհասարակ, *խաբում*՝ ընդունված ցանկացած կանոն խախտելը գրեթե բացառվել է: Կանայք անգամ հավատացել են, որ խաբողի կովերը կցամաքեն, կաթը հաճախ *կկտրվի*¹՝ կփչանա, իրենք դժոխք կընկնեն [Բդոյան, 2014, 110]: Դժոխքի և դրախտի գոյությանը չհավատացողներն էլ համոզված են, որ ջուր խառնելը կանխելու՝ համար է ժողովուրդը հնարել հետևյալ զրույցը. դժոխքում հայտնված մեղավորի առաջ սատանան դնում է ջուր խառնած կաթը և ստիպում ջուրն առանձնացնել կաթից [ԴԱՆ, Վարդենիս, Գալստյան Թամարա, 20.09.2023]:

Այնուամենայնիվ, ամեն դեպքում, զգուշավոր են եղել. օրինակ՝ ինչպես վերը նշեցինք, նույն ճիպտից երկուսն է եղել, քանի որ անագնիվներ, այնուամենայնիվ, հայտնաբերվել են¹: Հայոց անասնապահական մշակույթն արտացոլող խաղերը նկարագրելիս՝ Վ. Բդոյանը հիշատակում է անագնիվության պատճառով առաջացած վեճերի մասին. «Խապ ու խագի ժամանակ հաճախակի կեղծ վեճեր էին ստեղծվում, պատճառաբանելով, թե այսինչ «դրկցին կնիկը» կաթին ջուր է խառնում, կամ ճանապարհին անձրևի կաթիլներից կաթը իր գոգնոցով չի պաշտպանել, կամ այսինչի կնիկը կաթը պստի քուղով փոխ է տվել, մեծ քուղով ետ է պահանջում և այլն: Բանավեճերն այնտեղ էին հասնում, որ տան «տղամարդիկ» միջամտում, «թքում, մրում» և հաշտեցնում էին իրենց կովարար կանանց և ընդհակառակը, երբեմն էլ կաթի պատճառով ծագում էին «դագինակի կոիվներ», որով *խապ ու խագով իրար հետ կապված* ազգական կամ հարևան մարդիկ անջատվում, ուրիշ *խապ* էին կազմակերպում» [Բդոյան, 1963, 218]:

Ազնիվ հարաբերությունների մասին ժողովրդական պատկերացումը հստակորեն արտացոլված է «*Այրի կինը և իր որդին*» միջնադարյան առակում. կինը սովորաբար կաթին մի շերեփ ջուր է ավելացրել, հետո *փոխ տվել* հարևաններին, տղայի մոտ արդարանալով, որ դա անում է իրենց ձմեռվա *թացանի* [լայն իմաստով՝ կաթնեղեն, այս համատեքստում՝ ձմեռվա յուղ ու պանիր. տե՛ս Մալխասեանց 1944, 88]՝ համար: Երբ նրանց տասն այծը ջրհեղեղը տարել է, տղան դա պայմանավորել է մոր գործած մեղքով. «Այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին, հավաքվեց, հեղեղ դարձավ ու եկավ մեր այծերը տարավ, լցրեց գետը» [Գոշ, Այգեկցի, 1986, 34]:

Վերոնշյալ պատկերացումը դրսևորվում է նաև առած-ասացվածքներում. «Կով կթողը կով կթողին չի կրնա խաբե», «Կով կթող գկով կթող չկրնա խաբե», «Խաբ [կաթփոխ] էնողը խաբի տիրոջը չի խաբի» [Հակոբյան, 1974, 363; Ղանալանյան, 1960, 179, 185]:

¹Հատկանշական է, որ որոշ բանասացներ ոչ միայն սատանաների, ինչ-որ չափով նաև անագնիվության դեպքերի ի հայտ գալն ու անվստահությունն են համարում *կաթը փոխ տալու* սովորույթի աստիճանական վերացման պատճառը: Նկատենք, որ խորհրդային տարիներին նույնիսկ մեկ կով ունեցող որոշ ընտանիքներ արդեն կարիք չեն ունեցել խաբի անդամ դառնալու, որովհետև կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում աշխատողներին, որպես աշխօր, նաև կաթնամթերք են տվել, և տնային պայմաններում պատրաստելու կարիք արդեն չի եղել: Այսպիսով՝ *խաբի* անդամ ընտանիքների թվի նվազումն այդ տարիներին և առհասարակ, իհարկե, առավելապես պայմանավորված է տնտեսական դրդապատճառներով, օրինակ՝ կովը սատկեց, վաճառեցին, կթու անասուն այլևս չունեն և այլն, սակայն, հաշվի առնելով դաշտային նյութերը, կարծում ենք, բանասացների նշած հանգամանքները ևս իրենց ազդեցությունն են ունեցել: Այնուամենայնիվ, դարերի խորքից եկած սովորույթը շարունակել է կենցաղավարվել նաև խորհրդային և հետխորհրդային տարիներին՝ ընդհուպ մինչև մեր օրեր:

Այսօր էլ Շիրակում և Ջավախքում կենցաղավարում են *խաբ ու խազ* երևույթին առնչվող արտահայտություններ, բանաձևային բանահյուսության որոշ միավորներ, որոնք տեղային բնույթ են կրում և ընկալելի չեն երևույթին անձանոթ միջավայրում: Օրինակ՝ *խաբը վրեն է [խառն է, շատ զբաղված է]¹*: Հաճախ «մտերմություն» բառին որպես հոմանիշ գործածվում է «խաբ» բառը: Օրինակ՝ *Միլվան ու Ալինան Անժիկի խաբից են* [այսինքն մտերիմ են Անժիկի հետ]: Մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արդարությունն ու դիմացինին վստահելու կարողությունը՝ բանաձևերի միջոցով կիրառվում են առօրյա խոսակցական լեզվում: Օրինակ՝ *մարդ էղի, օր հետո խաբ մտնին²*:

Համոզված ենք, որ հատկապես ազնիվ հարաբերությունների շնորհիվ է, որ *խաբի* անդամ ընտանիքների համագործակցությունը փոխանցվում է սերնդեսերունդ³: *Խաբվորների* սերտ [թեև ժամանակավոր, ոչ հավերժական] համագործակցության գաղափարը նույնպես արտացոլված է ժողովրդական առածում. «Կովը մեռավ, խաբը [կաթփոխ] վերցավ» կամ «Կովս մեռավ, խապս հատավ» [Ղանալանյան, 1960, 185; Գաբիկեան, 1952, 242-243], քանզի առածի՝ *հարաբերությունները խզել* իմաստը բացատրվում է խնամիական կապերի խզման օրինակով, որը կյանքում երբեմն կարող է պատահել աղջկա մահից հետո: Առածում *խաբի* մասին հիշատակությունը, առավել ևս, նման օրինակով բացատրությունը մեկ անգամ ևս վկայում է ժողովրդական մշակույթում այս երևույթի կարևորության, տեղի ու դերի մասին:

Կնոջ դերը խաբի կազմակերպման գործընթացում: *Խաբը* կարելի է համարել ապրուստի կարիքները հոգալու՝ հայ տնտեսուհու հրաշալի մտահղացում, արտադրական մշակույթը կազմակերպելու հմտության ինքնատիպ դրսևորում: *Խաբ ու խազի* խմբերը ձևավորվել են հարևան կանանց հավաքների ու քննարկումների ընթացքում: *Խաբ* երևույթը լրացուցիչ վկայություն է այն իրողության, որ հայ կինը ունակ է նաև հասարակական գործունեության, կարևոր դեր է ունեցել ոչ միայն ընտանեկան, այլև արտադրական մշակույթում:

Ժիր, գործունյա հայ գեղջկուհին 10-12 օրվա ընթացքում տարվա պաշարը պատրաստել է, ավելցուկը վաճառել քաղաքում [Բօսյան, 1926, 13]: Թեև Ջավախքում, Բդոյանի վկայությամբ, *խաբը* կազմավորվելու գործում վճռական խոսքը պատկանել է տղամարդկանց, որոնք հետագայում չեն մասնակցել *խաբի* ներքին գործերին [Բդոյան, 2014, 108-109], այնուամենայնիվ, հրապարակի վրա եղած նյութերը, դաշտային հետազոտությունները վկայում են, որ *խաբը* ձևավորելու, իրականացնելու մենաշնորհը կանանցն է եղել, այսօր էլ շարունակվում է այդպես: Այս մասին է վկայում նաև Ջավախքում կենցաղավարած «Խապ ու խազ» կոչվող ժողովրդական խաղը [Բդոյան, 1963, 218, 219], որն աղջիկներն էին խաղում՝ «բեմադրելով» երևույթի ողջ ընթացքը [իհարկե, ինչպես վերը նշվեց, խաղի վերջում երբեմն անհրաժեշտ էր լինում նաև տղաների մասնակցություն]:

¹Ականատեսի պատկերավոր խոսքով՝ սարում դժվար չէ գտնել *խաբի տիրոջը. կաթը նրա՝ վրա է*, ում աչքերն արյունով են լցված ծխից (տե՛ս Տէր-Գրիգորեան Գր, Գիւղատնտես, 21.11.1910, 646):

²Բանահյուսական վերոնշյալ երեք նմուշները հաղորդելու համար շնորհակալություն ենք հայտնում Բ.Գ.Թ. Հասմիկ Գալստյանին՝ ծնված Շիրակի Վահրամաբերդ գյուղում:

³Բանասացներից ոմանք հպարտանում են, որ իրենց սկեսուրները, նույնիսկ սկեսուրների սկեսուրները նույն *խաբի* անդամ են եղել դեռևս խորհրդային տարիներին:

Ջավախահայ կանայք շեշտում են, որ *խաբվորին* ընտրելիս կարևորվում է նրա մաքրասեր լինելը¹ [Ղարիբյան-Գրիգորյան Վարդիթեր, 22.11.2023]: *Խաբի* կարևոր և պարտադիր պայմաններից է *խաբվորների* պարտաճանաչությունն ու արագաշարժությունը: Նոր կյանք կաթն ունի որոշակի ջերմաստիճան: Հարկավոր է կաթն արագ հասցնել *խաբատիրոջը*, որպեսզի չսառչի, և գտելիս հում սերն ամբողջությամբ դուրս գա: Կաթը չափելիս ճիպտի օգտագործումը բանասացները պայմանավորում են նաև ա՛յս հանգամանքով, ոչ միայն ավանդույթի ուժով, թե՛ *մեր նախնիները, մեր տատերն այդպես են արել, մենք էլ ենք այդպես անում*: Ավելորդ անգամ կաթը չեն դատարկում դուլից դուլ [որի ընթացքում կաթը սառչում է] և, ճիպտով չափելով, բանասացների համոզմամբ, հնարավորինս պահպանում են կաթի ցանկալի ջերմաստիճանը¹: Այնուամենայնիվ, միևնույն գյուղում կանանց մի մասը *կաթչափն* արդեն սկսել է կատարել լիտրերի գծանշումներ ունեցող դուլներով²:

Տնտեսուհին հանգստանում է, երբ *խաբն իր տանը չէ, խաբն իր վրա չէ, կաթն իր վրա չէ*: Մեր օրերում, առավոտյան *խաբ բերելիս* կանայք իրենց թույլ են տալիս մի քիչ *լիցքաթափվել*, գրուցել *խաբի տիրոջ* կազմակերպած նախաճաշ-սուրճի սեղանի շուրջ, որը դարձել է գործընթացի պարտադիր և հաճելի մաս: Կարելի է ենթադրել, որ սրանով դրսևորվում է *խաբի* մեկ այլ, թեև ո՛չ առաջնային, ո՛չ նախնական՝ գեղջկուհիների շփումն ու տեղեկատվության փոխանակումն ապահովող գործառույթը:

Եզրահանգումներ: *Խաբ ու խազի* հիմնական, նախնական նպատակը ոչ ունևոր գյուղացու ապրուստի կենսական միջոցների, հատկապես յուղ ու պանրի տարեկան պաշարի պատրաստումն էր, որն, առանց խմբերի ձևավորման, գրեթե հնարավոր չէր իրականացնել: Կարևորում ենք նաև մեկ այլ, թեև ո՛չ առաջնային, ո՛չ նախնական՝ գեղջկուհիների շփումն ու տեղեկատվության փոխանակումն ապահովող գործառույթը:

Կաթփռիսը կարելի է համարել գործընկերության՝ գուցե ձևով [*խաբը ու խազ*] նմանը չունեցող երևույթ, որի «գյուտը», կարծում ենք, քիչ *կթան* ունեցող, աղքատ ընտանիքների տանտիկիներինն է: Նման գործընկերության կազմակերպումը լրացուցիչ վկայություն է այն իրողության, որ հայ կինը ունակ է նաև հասարակական գործունեության, կարևոր դեր է ունեցել ոչ միայն ընտանեկան, այլև արտադրական մշակույթում:

Մշակութային այս երևույթը ազնիվ հարաբերությունների ցուցիչ է, չնայած, պատահել են անազնվության հատուկենտ դեպքեր, որոնց հեղինակներն, ինչպես նշեցինք վերը, պատժվել են:

Կաթփռիսի կենցաղավարման արեալը, կարծում ենք, ավելի լայն է եղել, քան նշվում է աղբյուրներում: Հայ ընտանիքների՝ տարբեր առիթներով բնակության վայրը փոխելու պատճառով ևս հայ տնտեսուհիները տարածել են նաև մշակութային այս օգտավետ երևույթը:

Կաթը չափելու՝ մեր օրերում գուցե առաջին հայացքից տարօրինակ ձևը, բանասացների պնդմամբ պահպանվել է ո՛չ միայն ավանդույթի ուժով: Ապակյա բանկայով հեշտ չափելուն

¹Տեղեկությունը հաղորդելու համար շնորհակալություն ենք հայտնում Բ.Գ.Թ. Հասմիկ Գալստյանին՝ ծնված Շիրակի Վահրամաբերդ գյուղում:

²Որոշ բանասացներ *ձեռից բան չեկող, հեշտին վազող, անգյալ* են որակում համագյուղացի այն կանանց, որոնք սկսել են կաթը չափել ոչ թե *ծոնթով*, այլ լիտրերի նշագծումներ ունեցող դուլներով (ԴԱՆ, 2023, 47), թեև նաև անկեղծորեն զարմանում են, եթե ուսումնասիրողին մի քիչ բարդ է թվում խազերի և կաթի քանակի յուրօրինակ հաշվարկը, քանի որ իրենց համար՝ *պարզից էլ պարզ է*:

տնտեսուհիները դեմ են նաև կաթի որակային հատկանիշների հետ կապված այլ, օրինակ՝ շուտ սառչելու, մշակելու համար ճիշտ ջերմաստիճանը կորցնելու հանգամանքով ևս: Կարծում ենք՝ այս հանգամանքով կարելի է բացատրել նաև այն, որ *կաթփռին* այսօր կազմակերպվում է բացառապես տարածքային, ավելի կոնկրետ, *հարևանական սկզբունքով* (իրար շատ մոտ ապրող հարևանուհիներով): *Կաթը փռի տալու* մշակույթը ամրագրված է բանահյուսական տարբեր նմուշներում, ինչն այս երևույթի՝ հայոց մշակույթում ունեցած կարևորության մասին լրացուցիչ վկայություն է:

Գրականության ցանկ

- Acharean H.** 1913, Hayerēn gawarakan bararan, Eminyan azgagrakan zh'oghovatsu, h. T', Lazarean Chemaran Arewelean Lezowats', T'iflis, 1143 էջ [in Armenian].
- Aharonyan A.** 1982, HRŌ kinē, Yerkeri zh'oghovatsu, G, T'ehran, Armēn hrat. marmin, 408 էջ [in Armenian].
- Aghavni** 1973, Shirak, Yerewan, Haypethrat, 847 էջ [in Armenian].
- Aghayan E.** 1976, Ardi hayereni bats'atrakan bararan, h. 1, Yerewan, Hayastan, 929 էջ [in Armenian].
- Andrēasean V.** 1977, Ch'armahal gawar, Nor Jugha, tp. Sb. Amenap'rkich' van k'i, 222 էջ [in Armenian].
- Baypurtt'sean S.** 1896, Sari giwghats'iner: Nor Dar, T'iflis, 22.05.1896, 88, էջ 3 [in Armenian].
- Bdoyan V.** 1963, Hay zh'oghovrdakan khagher, h. 1, Yerewan, HSSR GA hrat., 297 էջ [in Armenian].
- Bdoyan V.** 1974, Hay azgagrut'yun. Hamarot urvagits, Yerewan, Yerewani hamals. hrat., 288 էջ [in Armenian].
- Bdoyan V.** 2014, Javakhk'i hayots' azgagrut'yunē ew zh'oghovrdakan banarvestē, Yerewan, YPH. hrat., 748 էջ [in Armenian].
- Gabikeaan K.** 1952, Bargirk' sebastahay gawaralezowi, Yerusaghem, hrat. Hamasebastahay verashinats' miut'ean Amerikayi, tp. Srbot's Hakobeants', 682 էջ [in Armenian].
- Gaspar H.** 1892, Giwghatntesut'yunē hay giwgherum. Kat'natntesut'yan masin: Nor Dar, T'iflis, 06.05.1892, 76, էջ 1-2 [in Armenian].
- Geworgyan G.** 1972, Ashtaraki azgagrakan nyut'erē, Hnagitut'yan ew azgagrut'yan instituti arkhiv [aysuhetew` HAI] Arkh., Geworgyan G. f., g. 1, t'. 86, Yerewan, dzeragir, [in Armenian].
- Ghanalanyan A.** 1960, Aratsani, Yerewan, HSSR GA hrat., 398 էջ [in Armenian].
- Gosh M., Aygekts'i V.** 1896, Arakner: Dpr. Krtser ew mijin tarik'i hamar: Yerewan, Luys, 79 էջ [in Armenian].
- Hakobyan G.** 1974, Nerk'in Baseni azgagrut'yunē ew banahyusut'yunē, Yerewan, Hajastan, 460 էջ [in Armenian].
- Hambardzumean V.** 1927, Giwashkharh: Patmakan ew azgagrakan usumnasirutiwn, P'ariz, tp. “Tarōn”, 280 էջ [in Armenian].

- Karakhanyan G.** 2003, Hayots' zh'oghovrdakan mshakuyt'ě. Hanragitaran, h. A, Yerevan, HH GAA "Gitut'yun", 322 ěj [in Armenian].
- K'ōsean H.** 1926, Bardzr Hayk', h. B, Karnoy giwgherě, Vienna, tp. Mkhit'arean, 184 ěj [in Armenian].
- Malkhaseants' St.** 1944, Hayerēn bats'atrakan bararan, h. 2, Yerevan, Haykakan SSR Petakan Hratarakch'ut'yun, 512 ěj [in Armenian].
- Malkhaseants' St.** 1945, Hayerēn bats'atrakan bararan, h. 4, Yerevan, Haykakan SSR Petakan Hratarakch'ut'yun 647 ěj [in Armenian].
- Patrik A.** 1975, Sebastahay gyughashkharhě, HAI Arkh., Patrik A. f., ts' 1, g. 1, t'. 29, Yerevan, mek'enagir[in Armenian].
- P'olatean A.** 1969, Patmut'iwn hayots' Arabkiri, Niw Yeork', Amerikayi Arabkiri miut'ean hrat., 1020 ěj [in Armenian].
- Sahakyan N.** 1985, Sebastiyi nahangi Khurnavul gyughě ew ir avanduyt'nerě, HAI Arkh., Sahakyan N. f., g. 1, t'. 125, Yerevan, mek'enagir[in Armenian].
- Sanasaryan N.** 1965, Karno gavari azgagrakan nyut'erě, HAI Arkh., Sanasaryan N. f., ts' 1, g. 1, t'. 157, Yerevan, dzeragir, [in Armenian].
- Tēr-Grigorean Gr.** 1910, Kat'natntesut'yuně Shirakum: Giwghatntes, T'iflis, 21.11.1910, ěj 646-649[in Armenian].
- T'orosean H.** 1969, Patmut'iwn hay Tomartsayi, h. B, Pēyrut', tp. Sewan, ěj 838-1786 [in Armenian].
- Vants'ean G.** 1896, Hay hamaynk'i sovorut'yunner, Murch, N 1, T'iflis, ěj 100-106[in Armenian].
- Zh'amanakakits' hayots' lezvi bats'atrakan bararan 1980, h. 4, Yerevan, Haykakan SSH Gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 829 ěj [in Armenian].



Նկար 1. Կաթը չափելու ճիպոտ-փայտիկ, Շիրակ, գ. Անուշավան, 2023թ. Մայիս



Նկար 2. Սառնաղբյուր գյուղի կանայք գնում են կաթը փոխ տալու: Շիրակ, 2025թ. օգոստոս